

**ՊԱՏՄԱԿԱՆ ՑՈՒԾԱՐՁԱՆՆԵՐԻ  
ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԲՆԱԳԱԻԱՌՈՒՄ  
ԶԵՌՔԵՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆՆՈՒՄ**

Ժամանակակից հասարակութիւնը անընդմէջ աճող ուշադրութիւն է դարձնում իր մշակութային ժառանգութեան պահպանմանը: Մեր ժառանգութիւնը մեր ժողովրդի (ինչպէս նաեւ համայն մարդկութեան) համընդհանուր ձեռքբերումն ու մեր ժառանգութիւնը մեր նախնիների կեանքի տարեգիրն է իր ամբողջ հաւաքականութեան մէջ: Այն մեր ազգային ինքնութեան եւ ազգային ինքնագիտակցութեան հիմքն է: Անցեալի հետ կապը մեզ փոխանցում է տեւականութեան եւ կայունութեան զգացում, ինչը որոշում է ազգի բարոյական առողջութեան մակարդակը: Մշակութային ժառանգութեան հիմնական եւ կարեւոր տարրը կազմում են պատմական յուշարձանները:

Պատմական յուշարձանները հանդիսանում են քաղաքակըրթութեան զարգացման կենդանի վկաները, հին աւանդոյթների իրական արտացոլումը: Նրանց լայն ժողովրդականացումը նպաստում է ժողովրդի միջեւ փոխադարձ յարգանքի եւ փոխըմբըռնմանը, բերում է ազգի հոգեւոր միացմանը համընդհանուր արմատների եւ արժէքների շուրջ եւ արթնացնում է հպարտութեան զգացմունք հայրենիքի հանդէպ: Ինչպէս նաեւ յուշարձանների ժողովրդականացումը հանդիսանում է քաղաքակըրթութեան զարգացման իւրայատկութեան մասին կարծիքի դրսեւորման հիմքերից մէկը: Այսօր ամբողջ աշխարհում մեծ ուշադրութիւն է դարձւում պատմական յուշարձանների պահպանմանը եւ վերականգնմանը, որի հիմունքները եւ մեթոդները զարգացել եւ դրսեւորուել են պատմութեան ընթացքում եւ կախուած են եղել նրանից թէ յանուն ինչի էր վերականգնուում յուշարձանը:

Պատմական փաստաթղթերը պահպանել են բազմաթիւ վկայութիւններ վերականգնման գործընթացի մասին, կարելի է յիշատակել բարելոնի նաբուգութոնոսոր թագաւորի հաւաքածոն

(ի.-Զ. Ք.ա.), որտեղ հաւաքուած էին իր ժամանակից երկու հազար տարի առաջ ստեղծուած գործեր շումերական Շուլդայ թագաւորի համար:

Ալեքսանդր Մակեդոնացին (356-329 Ք.ա.) 331 թուին գրաւելով Բաբելոնը հրամայեց վերականգնել Բաբելոնեան աշտարակը՝ իր կողմը գրաւելու համար տեղական բնակչութեան ընտրանին: Այստեղ վերականգնման աշխատանքները պայմանաւորուած են քաղաքական նպատակներով:

Հետաքրքրական է նշել կայսր Մայորիանի 457 թուի օրինագիծը, ի պահպանութիւն յուշարձանների որպէս արժէքաւոր իմաստի նիւթական կրողներ:

Օրինագծում ասւում է «Թոլոր շինութիւնները, որոնք կառուցուել են եին ժամանակների քաղաքի բարեզարդման եւ համընդհանուր շահաւետութեան համար, լինեն դրանք տաճարներ կամ այլ յուշարձաններ, ոչ ոքի կողմից չեն բանորի, ոչ ոք չպէտք է նրանց դիպչի...»:

Սակայն յուշարձանների պահպանումը եւ վերականգնումը վաղեմի ժամանակներում առաջնորդւում էր ոչ միայն յարգանքով նրանց գեղագիտական նշանակութեան հանդէպ: Յաճախ այն պայմանաւորուած էր քաղաքական, կրօնական եւ իրատեսական գրդապատճառներով: Ընդ որում նոյն պատճառները հիմք էին հանդիսանում հակառակ գործողութիւնների՝ «օտարի» ոչնչացմանը: Այդ նախնադարեան եսապաշտութիւնը թուլացաւ միայն վերածննդի ժամանակաշրջանում չնորհիւ մարդասիրական գաղափարների հաստատմանը: Գնայած որոշ ծայրայնդականների որոնք նկատում են մեր ժամանակներում անգամ. Բամիանում թուղթանների արձանների պայմենումը Թալիբների կողմից կամ Նախիջեւանում Հայկական խաչքարերի ոչնչացումը Աղբբեջանցինների կողմից եւ այլն:

Մինչեւ վերածննդի դարաշրջանը, յուշարձանների վերականգնումը կրում էր կիրառական բնոյթ: Վերածննդի ժամանակաշրջանում սկսեց դրսեւորուել գեղագիտական ժառանգութեան պահպանման կարիքը: Անտիկ ժամանակի գլուխգործոցները համարուեցին արժէքաւոր եւ արժանի ընդօրինակման: Այս ժամանակներում է, որ առաջին անգամ առաջ է գալիս յուշարձանի վերականգնման գաղափարը՝ ձգտելով բերել յուշարձանը իր նախնական տեսքի, նմանակների ուսումնասրիութեան հիման վրայ: Սակայն վերածննդի ժամանակաշրջանում նոյնպէս, յուշար-

ձանների արժէւորումը կրում էր ընտրողական բնոյթ. միջնադարի յուշարձանների արժէքը ամբողջվիճ ժխտում էր այն համարելով գեղեցկութիւնից. եւ ճաշակից գուրկ, եւ ոչ պիտանի ընդօրինակման:

ԺԹ. դարը դարձաւ գիտական մեթոդաբանութեան, բնագիտական եւ հումանիտար գիտութիւնների բուռն զարգացման ժամանակաշրջան։ ԺԹ. դարի կէսերին դրսեւորում են յուշարձանների անձեռնմխելիութեան գաղափարները, սկսւում է գիտական վերականգնման պատմութիւնը. եւ ձեւաւորում է նրա սեփական մեթոդաբանութիւնը։ Այս ժամանակաշրջանի «ոռմանտիզմ» գեղագիտական գաղափարները անմիջական ազդեցութիւն ունեցան վերականգնման, այսպէս կոչուած, «ոռմանտիկ դպրոցի» ստեղծմանը, ինչպէս նաեւ նրա տեսութեանը։

Առաւել հետեւողականօրէն այդ տեսութիւնը արտայայտում է հանրայայտ արուեստի պատմաբան եւ վերականգնող ճարտարապետ իօֆեն իմմանուէլ Վիոլիկ լի Դիւկի (1814-1879) տեսական եւ գործնական գործունէութեան մէջ։ Նրա գաղափարները, որոնք հիմք հանդիսացան «ոռմանտիկ դպրոցի» գաղափարների դրսեւորմանը, ամփոփում են նրա ասուած հանրայայտ արտայայտութեան մէջ՝ «վերականգնել կառոյցը չի նշանակում վերականգնել, պահպանել կամ նորոգել նրան ամրացնելու նպատակով, այլ նշանակում է վերականգնել այն վերջնական տեսքի քերելով, որ մի գուցէ եւ երբեք իրականում գոյութիւն չի ունեցել»։ Զնայած Վիոլիկ լի Դիւկի շնորհալի լինելը թոյլ տուեց մի շարք ճարտարապետական յուշարձանների վերականգնման շատ բաւարար արդիւնքների հասնել՝ օրինակ Փարիզի Աստուածամօր տաճարի, կառկասոնի ամրոցի, Պյեռֆոնի դղեակի վերականգնումը... Սակայն նրա տաղանդի սահմաններից դուրս «ոռմանտիկ վերականգնումը» բերեց շատ լուրջ կորուստների։

ԺԹ. դարի վերջին սկսեց զարգանալ հետաքրքրութիւնը հնագիտական յուշարձանների հանդիպ եւ «Իռմանտիկ մեթոդով» յուշարձանների վերականգնման գործելառը ամէնուրեք համարուեց անբաւարար։ Հնագիտութիւնը կիսասիրողական պեղումներից եւ կառոյցների նկարագրութիւնից վերածուեց խիստ մեթոդական սկզբունքների վրայ հիմնուած՝ համակարգուած գիտական առարկայի։

Նման մօտեցումը սկսեց տարածուել նաեւ յուշարձանների ուսումնասիրման եւ վերականգնման վրայ, դիտելով այն որպէս առանձնայատուկ հնագիտական կառոյցներ։ Վերականգնող ճար-

տարապետները վերանայում էին իրենց գործունէութեան բնոյթը՝ դառնալով նաեւ հետազօտողներ։ Յուշարձանների վերականգնումը վերածում է առանձին մասնագիտութեան։ Կ. Բոյտոյի եւ Գ. Զիովանիոնիի աշխատութիւնները եւ ելոյթները իտալիայում մեծ դեր ունեցան վերականգնման «Հնագիտական մեթոդի» սկզբունքների հաստատմանը։

Վերականգնման տեսութեան եւ փորձի զարգացման վրայ մեծ ազդեցութիւն ունեցան նաեւ յոյն ճարտարապետ Ն. Բալանսոսի կողմից անցկացուած Աթէնքի Ակրոպոլիսում Պարթենոնի, էրէխիթէոնի եւ Պրոպիլէյների վերականգնման աշխատանքները, ինչը եւ հիմք հանդիսացաւ «Անատիլոզի մեթոդի» սկզբունքների մշակմանը եւ հաստատմանը։ Այս սկզբունքները արտայայտեցին 1931ին Աթէնքում կայացած Պատմական Յուշարձանների Ճարտարապետների եւ Ճարտարագէտների Ա. Միջազգային Համագումարում, որտեղ ընդունուեց այսպէս կոչուած «Ա.ք.էնֆի խարտիան», որի հիմնական դրոյթները հետեւեալն էին։

- հրաժարուել յուշարձանների ամրողական վերականգնումից
- յարգալից վերաբերուել յուշարձանի տարրեր ժամանակաշրջանի հետքերին, ինչը կ'արտայայտուի նրանով, որ ոչ մի դարաշրջանը բնութագրող ոճ ներկայացնող կառոյց կամ տարր չի հեռացուի։

**Աթէնքի համագումարի դրոյթները իրենց յետագայ զարգացումը ստացան արդէն Բ. Համաշխարհային պատերազմից յետոյ։**


1964ին կայացաւ Պատմական Յուշարձանների Ճարտարապետների եւ Ճարտարագէտների Բ. Միջազգային Համագումարը Վենետիկում, որ անուանուեց «Վենետիկեան Խարտիա»։

**Այստեղ հիմնական ուշադրութեան արժանացան յուշարձանների պահպանման խնդիրները։ Սակայն յետպատերազմեան վերակառուցումների փորձը գտաւ իրեն արտացոլումը հետեւեալում։**

- անհրաժեշտ համարուեց համաձանցնել յուշարձանի փաստագրական եւ գեղարվեստական արժեքները։
- վերականգնման աշխատանքների ծաւալը պէտք է պայմանաւորուած լինի յուշարձանի պահպանուածութեան աստիճանով, իսկ վերականգնման բնոյթը՝ պատմական եւ գեղագիտական արժեքների բացայայտման նպատակներով։

**Այսօր ամբողջ աշխարհում մեծ ուշադրութիւն է դարձւում պատմական յուշարձանների պահպանման ու վերականգնմանը, որոնց հիմունքներն ու մեթոդները զարգացել եւ դրսեւորուել են պատմութեան ընթացքում, ուստի թելադրում են առաւել բարձրացնել նրանց նկատմամբ պետութեան ուշադրութիւնն ու հոգածութիւնը:**

**Յուշարձանների պահպանման գործի կարեւորութիւնը Հայաստանում գիտակցեցին դեռեւս 1920ական թուականներից, երբ ստեղծուեց Յուշարձանների Պահպանման Կոմիտէն, որի ղեկավարութիւնը ստանձնեց ճարտարապետ Ալեքսանդր Թամանեանը:**



Ալեքսանդր Թամանեան

**Մեր հայրենական վերականգնման դպրոցի կայացման գործում իրենց ուրոյն տեղը զբաղեցրեցին նաեւ Թորոս Թորամանեանը, Նիկողայոս Մառը, Վարազգատ Յարութիւնեանը, Ալեքսանդրա Երեմեանը, Լիպարիտ Սաղոյեանը, Թելման Գեւորգեանը:**

**Իր գործունէութեան ամբողջ ընթացքում պետական աջակցութեան ներքոյ, կոմիտէն ծանրակշիռ ներդրում ունեցաւ տասնեակ յուշարձանների փրկութեան գործում:** Աւագները կրթեցին վերականգնող ճարտարապետների մի ամբողջ սերունդ:



Թորոս Թորամանյան



Նիկողայոս Ման



Վարագիան Հարուբյունյան



Լայարիտ Վարդյան




Ալեքսանդրա Երեմյան




Թելման Գևորգյան

**Ոգեշնչուած երիտասարդները ստեղծագործելու ջանք, ժամանակ եւ կարողութիւն չխնայեցին, ինչի արդիւնքում իրենց կատարուած նախագծերը պարբերաբար արժանացան տեղական եւ միջազգային մրցոյթների մրցանակների:**

- Գառնու Ս. Աստուածածին եկեղեցու ամբողջական վերականգնման նախագիծը 1986 թուականին արժանացաւ Հայաստանի ճարտարապետների միութեան «Տարուայ լաւագոյն նախագիծ» մրցանակին:




Գառնու Ս. Աստուածածին եկեղեցու ամրողական վերականգնման նախագիծ




Գառնու Ս. Աստուածածին եկեղեցին վերականգնումից առաջ և յետոյ

- **Տաթեւի եկեղեցու եւ զանդակատան վերականգնման նախագիծը 1988 թուականին Մուկուայում կայացած «Վերականգնման լաւագոյն ստեցծագործութիւն» խորագրով միջազգային մրցոյթի առաջին կարգի մրցանակի:**





Տաթեւի եկեղեցու եւ զանդակատան վերականգնման նախագիծ



Տաքեւի վանքը վերականգնումից առաջ եւ յետոյ

- Նորավանքի Բուրթելաշէն եկեղեցու վերականգնման նախագիծը 1984 թուականին Բուրդարիայի բիեննալէում արժանացաւ երկրորդ կարգի մրցանակին:




Նորավանքի Բուրթելաշէն եկեղեցու վերականգնման նախագիծ




Նորավանեմբ վերականգնումից առաջ եւ յնտոյ

- Այգեշատի թարգմանչած եկեղեցու վերականգնման նախագիծը 1989 թուականին արժանացաւ Հայաստանի մինիստրների խորհրդի յատուկ մրցանակին:



Այգեշատի թարգմանչած եկեղեցու վերականգնման նախագիծ՝




Այգեշատի թարգմանչած եկեղեցին այսօր

**Սակայն խորհրդային համակարգի փլուզումն իր կործանաբար ազդեցութիւնը թողեց՝ արդէն իսկ կայուն հիմքերի վրայ դրուած մշակութային շատ եւ շատ ոլորտների վրայ։ Նրա բասացական հետեւանքներն իր վրայ կրեց նաև մշակոյթը։**

- իր գոյութիւնը դադարեց 30-40 տարիների ընթացքում ստեղծուած եւ արդիւնաւեր գործող մի ամբողջ համակարգ
- կայացած վերականգնող ճարտարապետներից ու ճարտարագէտներից շատերը դուրս մնացին արտադրական շրջանառութիւնից
- խախտուեցին գիտանախագծային եւ նորմատիւ օրէնսդրային համակարգերը
- դրամական սակաւ յատկացումներն յաճախ օգտագործուեցին ոչ արդիւնաւէտ
- յուշարձանների վերականգնումն իրականացնող մասնագէտների եւ շինարարների հաւաստագրման բացակայութեան պայմաններում յաճախ աշխատանքները կատարեցին ոչ որակաւորուած կաղըրեր։

Եւ այս ամէնի արդիւնքում է, որ այսօր ունենք բազմաթիւ խոնարհուած եկեղեցիներ, վանքային համալիրներ ու յուշարձաններ, որոնք սպասում են իրենց վերածնունդին։





Կարծես մի պահ մոռացել ենք, որ տուրիզմի ինդուստրիայի զարգացման ամենակարևոր հումքը հանդիսանում է տուեալ երկրի պատմամշակութային յուշարձանը: Եւ բոլորովին պատահական չէ, որ առաջատար տուրիզմի երկրները տարեկան ֆինանսական մեծ ներդրումներ են անում իրենց յուշարձանների պահպանման եւ օգտագործման մէջ. առաջատար երկրները մօտ 0.5%, իսկ Հայաստանը ընդամէնը 0.03% չափով:

Եւ ահա՝ մտահոգուած լինելով Հայաստանում յուշարձանների պահպանման; վերականգնման եւ օգտագործման հիմնախնդիրներով եւ ցանկանալով աջակցութիւն ցուցաբերել այդ գործընթացին, նպաստելու հանրապետութիւնում իրականացուող յուշարձանների սակաւաթիւ վերականգնման աշխատանքներին, նրանց մակարդակը համապատասխանեցնելու միջազգային չափանիշներին, վերականգնող ճարտարապետները միացան եւ 2009 թուականին ստեղծեցին «Պատմական յուշարձանների վերականգնման հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպութիւնը, որն իր առաջին համագումարում հանդէս եկաւ հռչակագրով՝ Աջակցել Հայաստանի, Արցախի, պատմական Հայաստանի եւ սփիւռքի հայկական յուշարձանների պահպանման, վերականգնման, օգտագործման եւ հանրահռչակման գործընթացին:



**Ասոցիացիան նաեւ իր առջեւ դրեց մի շարք կարեւորագոյն խնդիրներ.**

- **Աջակցել գործող պետական մարմիններին յուշարձանների պահպանման եւ վերականգնման գործում:**
- **Ձեռք բերել փորձագիտական-խորհրդատուական կարգակիցակ:**
- **Ստեղծել յուշարձանների վերականգնման ընթացքին հետեւող վերահսկող խումբ:**
- **Հաստատել յուշարձանների պահպանման ոլորտում միջազգային կազմակերպութիւնների հետ գործնական կապեր:**
- **Հիմնել յուշարձանների պահպանման համահայկական միութիւն:**
- **Ներգրաւել յուշարձանների պահպանման եւ վերականգնման գործում աւելի շատ թուով բարերարների:**

**Անցած հինգ տարիների ընթացքում ասոցիացիան հասցը կատարել իր ծրագրերից շատերը, սակայն անելիքներ դեռ չատ կան:**

**Բանակցութիւնների եւ քննարկումների արդիւնքում Ասոցիացիայի եւ ՀՀ Մշակոյթի նախարարութեան միջեւ կնքուեց փոխամագործակցութեան յուշագիր:**

**Կազմակերպութեաց այցելութիւն դէպի Արցախի պատմական յուշարձանները, ունեցաւ հանդիպումներ նախագահի ու վարչապետի հետ եւ ստացաւ նմանատիպ փաստաթղթի կնքման առաջարկ:**

**Միեւնոյն նպատակին ծառայելով, մշակոյթի նախարարութեան գիտամեթոդական խորհուրդն ու ասոցիացիայի մասնագէտները սկսեցին համատեղ քննարկել եւ իրենց մասնագիտական մշակուած վերականգնման նախագծերը:**


**Ստեղծուեց վերահսկող խումբ, որն իրականացրեց այցելութիւններ Հայաստանում վերականգնման ընթացքում գտնուող**

յուշարձաններ, եւ աշխատանքների վերաբերեալ եզրակացութիւնները յանձնուեցին ՀՀ մշակոյթի նախարարութեանը եւ լուսաբանուեցին լրատուամիջոցներով:

2010ին Ասոցիացիան ընդգրկուեց ՅՈՒՆԵՍԿՕի ակումբի անդամ, որն համարում ենք մեծ առաջընթաց:


Համագործակցելով «Երկիր և Մշակոյթ» կազմակերպութեան հետ համատեղ իրականացուեցին մի շարք յուշարձանների վերականգնողական աշխատանքներ:

Բարեբարների հետ սերտ համագործակցելով, ասոցիացիայի մասնագիտների ջանքերով այսօր արդէն ունենք վերականգնուած մի շարք յուշարձաններ:



Բերենք բարեբարների հետ սերտ համագործութեան մի քանի օրինակ:

ՀՀ կոտայքի մարզի Աղբիւրակ համայնքի է. դարի եռախորան եկեղեցու վերականգնումն իրականացւում է բարեբարի հովանաւորութեամբ (ցանկացել է անունը չհրապարակել):



**ՀՀ Կոտայքի մարզի Առինջ համայնքի սուրբ Ստեփանոս եկեղեցին վերականգնուեց Արովեանի քաղաքապետ՝ Կարապետ Գուլյեանի հովանաւորութեամբ:**



Այսպէս, եւս մէկ անգամ, կոչ եմ անում համայն հայութեանը եւ համամարդկային արժէքների ճակատագրով մտահոգուած բարերարներին համախմբուել եւ սատարել մեր յուշարձանների պահպանման եւ վերականգնման սուրբ գործին եւ համոզուած եմ, որ համագործակցութեան արդիւնքում վստահաբար կը ծնուեն համատեղ իրականացուելիք նոր հայրենանուէր ծրադրեր:

ԳԱՅԱՆՔ ՆԱԶԼՈՒԽԱՆԵԱՆ